

#### Արձանագրություն 4

2021 թվականի հունիսի 23-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին ծնողների 70 %-ը: Ժողովը վարում էր դասդեկ Վերա Ալիխանյանը:

#### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ`

- 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում.
  - ուսման առաջադիմությունը
  - տարեվերջյան դասագրքի հանձնման արդյունքները
- Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

1. Լսեցին. - 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփման հարցը:

Ելույթ ունեցավ դասուցիկ Վ. Ալիխանյանը՝ իր խոսքում նշելով, որ այս տարին բավականին ծանր էր, սակայն աշակերտները կարողացան հաղթահարել համավարակով պայմանավորված խնդիրներն ու պատվով ավարտել 2020-2021 ուստարին: Դասուցիկը մեկ անգամ նշեց յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը՝ ծնողներին բաժանելով ամփոփաթերթիկները: Այսպիսով, ամփոփելով 2-րդ կիսամյակի և տարեկան արդյունքները, նա նշեց, որ դասարանում կա երկու գերազանց առաջադիմությամբ աշակերտ՝ Հակոբյան Աստղիկն ու Ղարիբյան Սվետլանան և հարվածային 2 աշակերտ: Դասարանը ցուցաբերել է 100% առաջադիմություն, որակական ցուցանիշը կազմել է 22% , բացակայությունը՝ 163 ժամ: Դասուցիկ Վ. Ալիխանյանն ասաց ծնողներին, որ դասարանի բոլոր աշակերտները հանձնել են դասագրքերը լավ վիճակում:

Որոշեցին.-

Ի գիտություն ընդունել դասարանի ղեկավարի ներկայացրած տարեկան գնահատականների ու 2020-2021 ուստարում կատարված աշխատանքները: Ուսուցիչների ու դասուցիկի աշխատանքը գնահատել գերազանց՝ 100% արդյունավետություն ապահովելու համար:



2. Լսեցին. – Տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցը:

Դասուցիկ Վ. Ալիխանյանը ներկայացրեց, որ իրեն են դիմել բազմաթիվ ծնողներ տարեվերջյան էքսկուրսիա կազմակերպելու հարցով: Դասուցիկը երբեք դեմ չի եղել նման միջոցառումներին՝ էքսկուրսիաներին, թատրոն, կինո, մշակույթի օջախներ այցելություններին: Դրանք հետապնդում են կոնկրետ նպատակներ, նպաստում են աշակերտների ազատ շփմանը, միջանձնային նորմալ հարաբերությունների ձևավորմանը, ֆիզիկական, գեղագիտական և հայրենագիտական գիտելիքների զարգացմանը: Խոսելով էքսկուրսիաների կարևորության մասին՝ Վ. Ալիխանյանը կարևորեց հատկապես նման միջոցառումների կազմակերպման պատասխանատվությունը էքսկուրսիաները

կազմակերպել հուսալի, անվտանգ տրանսպորտային միջոցով: Գումարային խնդիրները պետք է կազմակերպվեն և լուծվեն բացառապես ծնողական խորհուրդների կողմից՝ առաջնորդվելով նվազագույն գումարներով՝ անհրաժեշտ ծախսեր անելու: Դասղեկը և ծնողները պետք է վերահսկեն և համակարգեն էքսկուրսիաներ կազմակերպելու աշխատանքները:

Որոշեցին.-էքսկուրսիա կազմակերպել դեպի Լոռի և իրականացնել՝ առաջնորդվելով բացառապես ծնողների և աշակերտների առաջարկություններով, համաձայնությամբ և մասնակցությամբ:

Ժողովի նախագահ՝  
Քարտուղար՝

  
----- Ա. Մկրտչյան  
  
----- Տ. Թաթոյան